

**ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻԱՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ
ԿԱՐԵԼԻ ՊԻՏԻ ԴԱՌՆԱՅ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԻՋՈՑԱՒ**

Անգամ մը եւս գոհունակութեամբ կը հաղորդենք մեր համայն հաւատացեալներուն, թէ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Օծումը ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 11ի կէսօրէ յետոյ ժամը 3:00ին պիտի կատարուի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ եւ մասնակցութեամբ բարձրաստիճան հիւր հոգեւորականներու եւ թեմիս հոգեւորականներու:

Հոգեպարար այս արարողութեան կարելի է ուղղակի հետեւիլ Առաջնորդարանի համացանցի միջոցաւ, www.armenianchurchwd.com/consecration

Կը ծրագրուի նաեւ Սուրբ Պատարագի Արարողութիւնն ալ նոյն ձեւով մատչելի դարձնել հաւատացեալներուն, որ տեղի պիտի ունենայ ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 12ի առաւօտեան ժամը 10:30էն սկսեալ:

Հեռասփռումը կարելի կը դառնայ նաեւ Ustream platform-ի միջոցաւ
www.ustream.tv/channel/pontifical-visit-2010.

Այս ձեւով հաւատացեալները առիթը կ'ունենան հետեւելու բացառիկ երկու արարողութիւններուն: